№ 9 ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

Գ. ՄԵՍՅԱՆ

3X31



# ՄԻԱՍԻՆ
## ՈՒ
# ՋՈԿ—ՋՈԿ

891.99ա
Մ-64

ԹԻՖԼԻՍ—1929

891.99Մ
Մ-64

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացե՛ք!

ՓՈՔՐԻԿ ԳՐԱԴԱՐԱՆ № 9

Գ. ՄԵՍՅԱՆ

# ՄԻԱՍԻՆ ՈՒ ՋՈԿ-ՋՈԿ

ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ

2004

ԹԻՖԼԻՍ — 1929

5269

Գրանեպլար № 1758. Տիրաժ 3000.

Թիֆլիս, Ժ.Տ.Գ.Խ. Պոլիգրաֆտրեստի 6-դ տպ., Կալինինի փ. № 3.

# ՄԻԱՍԻՆ ՈՒ ՋՈԿ-ՋՈԿ

Կանաչ դաշտում ծաղկավետ,
Միշտ անբաժան, իրար հետ
Արածում էին՝
Իրարից մեծ,
Իրարից գեր
Յերեք յեզներ։
Գազան չէր մոտենում նրանց
Մեն մենակ,
Ինչքան էլ լիներ ուժեղ.
Ցերեք զույգ պոզեր սրած,
Վոնց վոր դանակ,
Անհարկու էյին միատեղ։
Սեվուկ էր անունը մեկի—
Սև՛ էր՝ գիշերը վոնց վոր.

Ճերմակ էր անունը սպիտակի
Ու, կարմրի անունը՝ Խնձոր:
Մեկ էլ նրանց կողքին մի որ
Մի գայլ տնկվեց, թե՝
— Ձեզ ուտեմ պետք է։
— Դո՛ւ պետք է ուտես մե՞զ, ասին,
— Հա, ասավ, յերեքիդ միասին։
— Բո՜, բո՜ո՜, բո՜— զարմացան.
Եսպես էլ մի աներես գազա՜ն...



Մենք յերեքը լինենք—յերեք յեզ,
Դու մենակ մի գել, ու մեզ ուտե՞ս։
Ու մեջք մեջքի ավին իրար,
Թե՝ համեցեք դե, կեր հիմա.
Ու փոնց վոր բնից հանած թրեր.



Յերեք զույգ պող, սուր-սուր ու կեռ,
Յերեք կողմից վրա պրծան.
— Դո՛ւ անպիտան վոսկոր կրծան,
Ուտել կուզե՞ս, այ, քեզ կտանք։
Ու վոտքի տակ ավին նրանք,
Ծայրերն առան սուր պողերի
    Տրորեցին, քձձեցին,
    Բամբակ ավին՝
    Բուրդ գզեցին
    Ու մեկնեցին։
Գայլը հազիվ կիսակենդան,
Մեջքակոտոր, ցեխափալալ,
Սուսմեռուկի տալով իրան,
    Մի կերպ պրծավ։

Պրծավ էս գելը ու լալով գալիս է պատահում մի ուրիշ փորձված, ծեր գելի.

— Եդ ինչո՞ւ յես լալիս, ջահել,
— Բա յես չլամ, ո՜վ լա, ապեր.
Ամբողջ շաբաթ անոթի յես,
Յեկա, գտա յերեք հատ յեզ...
Պատմեց մեկ-մեկ, եսպե՜ս, եսպե՜ս...

— Վա՜յ դու անխելք, անփորձ տղա.
Բա, չգիտես մինչև հիմա,
Վոր մեկն ինչքան ուժով ըլի՝
Թույլ է նա միշտ շատից ելի։
Առաջ պետք է բաժանեյիր Միությունը,
Նրանից հետ ամեն մինը՝ ջոկ-ջոկ քոնը.
Կուզես, գնանք, ցույց տուր ինձ մի,
Ու տես, քեռիդ, թե ինչ կանի։
— Գնանք, ասավ,
Ու ցույց տվավ։

Փորձված գելը պոչը խաղացնելով մոտ յեկավ յեզներին կեղծավոր.

Բարո՛վ հազա՛ր, բարին հազար
Իմ աչքի լուս ընկերներին,
Իմ ծաղկակոխ յեղբայրներին...
— Տո՞ խաբեբա, տո՞ լիրբ գազան,
Նահլաթ լինի, տո ձեր ցեղին,
Մեծին, փոքրին, ձեր տուն, տեղին.
Վո՞ր որվանից՝ դու մեզ ընկեր,
Վո՞ր որվանից մենք՝ քեզ ախպեր։
Դե՛, վոնց յեկար, կորիր էնպես,



Թե՞ չէ՝ ախպեր ցույց կտանք քեզ...
Ու թափ տվին գլուխները։
Վախից՝ պոչը սղմեց գելը.
— Յես ձեզ ծառա,
Իմ աղաներ.
Համարեցեք,
Թե շունն եմ ձեր։



Դուք յերեքդ, յերեք հոկա.
Յես մի հորթի չափ էլ չկամ,
Յերբ վոր ուզեք,
Կըգգգգեք.

Թե չէ դաշտի կանաչը շա՜տ,
Վողջիս համար խոտը առատ.
Ցերեկ չըլեք,
Չորսը լինենք.
Ի՞նչ կպակսի,
Վոր միասին
Արածենք մենք ցերեկները,
Ու յերբ քնեք, յես ձեզ հսկեմ
գիշերները։
— Մա՛, մա՜, բո՛ բո՜…
Մտածեցին յեզան խելքով,
Խորհուրդ արին, հավան կացան,
Ցերեկի տեղ՝ չորսը դարձան։

———

Դեռ նրանց հետ խոտ եր լափում
Գելը սուտ-սուտ, հետո թափում,
Մինչև մի որ,
Շողոմ լեզվով ու կեղծավոր
Մոտենում ե նա սուս ու փուս.
— Սեվո՛ւկ, Խնձո՛ր, իմ աչքի լույս,
Վաղուց եմ յես
Ուզում ասեմ,
Վոր մի փորձանք պիտի բերի



Սպիտակ գույնը մեր ընկերի։
Կարմիր ու սև ձեր գույները՝
Չեն յերևում հեռվից իսկի
Վոչ ցերեկը, վոչ գիշերը.
Են ինչ սպիտակ գույնը նրա՝
Տասը, քսան վերստի վրա
Ձեն ե տալիս, կանչում մեկ-մեկ
Գառաններին գիշեր, ցերեկ,
Թե եստեղ ենք, յեկեք, կերեք…
Ասում եմ ձեզ.
Թե մի հնարք չգտնենք մենք,
Մեծ փորձանքի կհանդիպենք։
— Բո՛, բո՜, բո՛, բո՜…
(Ղորթ վոր, ղորթ վոր…)
Բա վո՞նց անենք, ո՞ւր գնանք, ո՞ւմ,
Չես կարա՞ մի ճար անես դո՜ւն,
Հը՞, ախպեր գել,
Վոր ճերմակը մեզ հետ չըլե՜ր…
— Չուզենամ ել,
Պետք ե անեմ—
Խոսք եմ տվել ձեզ պահպանեմ…
Միայն պետք ե հեռանաք դուք,
Չմոտենաք ձենին նրա,

Ինչքան բզզա՛, ինչքան՝ գոռա...
Ու գազազած սովից վաղուց,
Հասավ թե չէ՝ ժանիքները նշտարից
սուր



Բուղը խրեց
Ու գլորեց։



Ձեն չտվին նրա ձենին,
Մոտ չ'յեկան, վոր ոգնեյին.
Թողին ազատ սոված գելին։
Բզլին չոքեց մենակ թողած
խեղճ ընկերի։

*
* *

Յերբ ճերմակի մահվան որից
Մի քանի որ անցավ նորից,
Ու եզ մեկի լեշը հատավ՝
Գելը սևի կողքը մտավ*).
— Քեզ են որը չասի Սևուկ,
(Մի տեղ եյիք յերկուսով դուք),
Կարմիր գույնն է ամենից վատ,
Նրա ահը՝ սիպտակից շատ։
Պուտի կարմիր ծաղկի նման,
Ել ում ասես, չի կանչում նա.
Թե վոր մնաս դու դրա հետ,
Սուտ ինչ ասեմ, ախպեր, յես՝ չէ.
Ճիշտ է ասած, ընկերն, ընկեր,
Բայց իմ գլուխն ամենից վեր.

*) Կողքը մտավ—սկսեց համոզել։

Յես վոր չըլեմ, ինչիս ե պետք
Նրանից հետ հազար ընկեր,..
Սևի խելքում նստեց ելի
Նոր խրատը պաշտպան գելի։
— Լավ ես ասում, ասաց Սևը,
Բա չես կարո՞ղ Սիպտակի պես
Դրանից էլ ազատես մե՞զ։
— Կարամ, թե՝ չե,
Ճարս ինչ ե։
Մեր ապահով կյանքի համար,
Հանուն մեր լավ ընկերության,
Պետք ե անեմ.
Ծանր բան ե,
Ճիշտ ե, թեև,
Բայց, ընկեր Սև,
Վոր ասում ես... հեռացիր մի
Կողմի վրա,
Մենակ թող դու ինձ ու նրան։

*
* *

Սևը տասը վոտք չփոխած՝
Լսեց՝ Խնձոր յեզը բղղաց.
— Վորտեղ ես հե՜յ



Սևուկ ընկե՜ր...
Ոգնի՜ր, հասի՜ր,
Վա՜յ, ազատիր
Ես գազանից,
Խեղդում ե ինձ...
Բայց մոտ չեկավ Սևը նրան,
Ձենը մնաց
Անարձագանգ...



— Ջա՜ն, ճերմակ յեզ,
Ինչո՞ւ թողի մենակ յես քեզ,
Վոր չընկնեյի քո որը յես...
Հասի՜ր Սևուկ, ոգնիր թե չե,
Քու բզիդ ել պիտի չոքե...

Ինչքա՜ն գոռաց Խնձորը՝ գո՜ւր…
Լսեց Սևը ու մնաց լուռ,
Դեռ ավելի գնաց հեռու։

* * *

Պատմությունը այնուհետև պարզ էր
ու կարճ.
Մեկ-մեկու հետ գայլն ու Սևը
մնացին հաշտ,
Մինչև հատավ միսը Կարմրի։
Դե Սև, աչքդ տեսնի բարի.
Ու մի օր էլ մեր Սևուկին
Դրավ տակին։
Գոռաց Սևը.— օգնեցե՛ք հա՜յ…
Բայց ո՞վ կար, որ օգնության գար…
Ա՜խ ընկեր գել,
Բա ինձ էլ ես ուզում ուտե՞լ.
— Քեզ յես կերա էն վախտը դեռ,
Յերբ մնացիր առանց ընկեր,
Ինքդ՝ մենակ,
Պաշտպանդ՝ գել։



* * *

Արձակ դաշտում ցրիվ ընկած
Յերեք զույգ պոզ—սուր-սուր թրեր.
Սարսափ եյին ազդում նրանք,
Յերբ միասին եյին, մի տեղ.
Բաժանվեցին —ջոկ-ջոկ ընկան,
Թրերն անպետք, ժանգը վրան։

3731

0007882

2013

ՀՀ Ազգային գրադարան

NL0007882

3731
00007882
2013
ՀՀ Ազգային գրադարան
NL0007882

8-1055

**ԳԻՆԸ 15 ԿՈՊ.**

## ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՆՈՒՅՆ ՀԵՂԻՆԱԿԻ ՀԵՏԵՎՅԱԼ ՄԱՆԿԱԿԱՆ ԳՐՔՈՒՅԿՆԵՐԸ

«Փոքրիկ գրադարան»

№ 1. *Բադալը (սակավաթիվ)* . . . . . . . . 25 *կոպ.*
№ 2. *Խրճիթում* » » . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 3. *Վանիկը* » » . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 4. *Մայրը* . . . . . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 5. *Ծիթ-ճիթը* . . . . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 6. *Վագրն ու կատուն* . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 7. *Մայրիկից վրեժ* . . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 8. *Ծուտիկը-հրշեջ* . . . . . . . . . . 15 *կոպ.*
№ 9. *Միասին ու Ջոկ-Ջոկ* . . . . . . . . 15 *կոպ.*

891.542-93
Ն-64

*Վաճառվում են հայ գրավաճառանոցներում։*
*Գումարով գնողներին զեղչ։*
*Հեղինակի հասցեն՝* Тифлис, улица Жуковского, д. № 10.